

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԱԹՈՌՈՅՍ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ ԺԱՌՆԳ. ՎՐԺ.Ի ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Կիրակի, 23 Յունիս, երեկոյան ժամը 7-30ին, Վարժարանի Վերատեսուչ և Ս. Աթոռոյս Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արք. Աճէմեանի նախագահութեամբ, Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի սրահին մէջ կատարուեցաւ Ժառ. Վարժարանի և Ընծայարանի Ամալեքի Հանդէսը: Ներկայ էին ուսուցիչներ և հրաւիրեալներ:

Նախ գործադրուեցաւ զեղարուեստական յայտագիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերաւ Վարժարանի աշակերտութիւնը:

Տրց. Գարեգին Սէթեան խօսեցաւ ուսման կարեւորութեան մասին: Ուրիշներ արտասանութիւններ և ընթերցումներ կատարեցին: Վարժարանի երաժշտութեան ուսուցիչ և Ս. Աթոռոյս զպրապետ Պր. Սահակ Գալայճեանի զեկամարտութեամբ սաներ երգեցին հայաստանեան երգեր: Եղաւ նաեւ նուագաձու-

թիւն՝ զաշնակի վրայ:

Ապա Փոխ Տեսուչ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան կարգաց հակիրճ տեղեկագիրք Վարժարանի տարուան մը կեանքին: Վերատեսուչ Սրբազանը, Ընծայարանէն շրջանաւարտ 3 սարկաւազներու և Վարժարանի բաժնէն ընթացաւարտ 4 աշակերտներու միլայականները և յաջող աշակերտներու մրցանակները բաժնեկէ ետք, խօսեցաւ այն ակնկալութիւններուն մասին՝ զորս Հայց. Եկեղեցին և Հայ Ժողովուրդը ունին երեսադէմի ժառանգաւորաց Վարժարանէն և Ընծայարանէն. շեշտեց որ իւրաքանչիւր շրջանաւարտի խելալը պէտք է ըլլայ Եկեղեցիին և Ժողովուրդին ծառայութիւնը՝ անսակարկ նուիրումով:

«Տէր կնքո» մարթիրոսի երգեցողութեամբ փակուեցաւ Հանդէսը ժամը 8-30ին:

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Ամալեքի Հանդիսութիւնները, նախընթաց տարիներուն նման, այս տարի ալ կատարուեցան Մայիս և Յունիս ամիսներու ընթացքին:

Ա. ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

Կիրակի, 12 Մայիս, կէսօրէ ետք ժամը 4-ին, Ժողովուրդի ստուար բաղնիքին մը փութացած էր ժառանգաւորաց Վարժարանի մարդադաշտը, ներկայ ըլլալու համար Վարժարանի Տարեկան Դաշտահանդէսին:

Շուրջ երկու ժամերու ընթացքին, վարժարանի երկուսն աշակերտութիւնը, բաժնեւած երկուական մրցորդ խումբերու և ա-

ռաջնորդութեամբ մարզիչներ Պր. Մխաթ Բակրեանի և Օր. Աշխէն Վարդանեանի, խրադործեցին մարդական յաջող և հաճելի յայտագիր մը՝ բաղկացած վազքերէ, բուրքերէ, զուարճախաղերէ, զբօշարչաւէ, պարանաձողութիւնէ և այլն:

Հանդէսին ներկայ էր նաեւ Յունաց Պատրիարքարանէն Գերշ. Տ. Գլաուստիոս եպիսկո-

պոս, որ վարժարանի Տեսուչ Հոգչ. Տ. Կիրեղ Ծ. Վարդապետի հետ միասին, հանդէսի աւարտին կատարեց յաջող մարզիկներուն բաժաններու և մէտայներու բաշխումը:

Ժողովուրդը խաղափայլէն բաժնուեցաւ խիստ դո՛ւ տրամադրութեամբ, հանդիսատես ըլլալէ ետք զպրոցէն ներս իմացականին քովն ի վեր Ֆիզիքական կրթանքին ընծայուած կարեւորութեան:

Բ. ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԲԱԺՆԵՆ

Նախորդ տարիներու նման, այս հանդէսը կատարուեցաւ Հայ Երիտասարդաց Միութեան սրահին մէջ, Կիրակի, 2 Յունիս, կէսօրէ ետք ժամը 4ին:

Մեծ մասամբ աշակերտութեան ծնողներէն բաղկացած հո՛ծ բաղմութիւն մը սրահը լեցուցած էր արդէն որոշեալ ժամուն: Վարժարանի երկսեռ փոքրիկները, մէկուկէս ժամուան տեսողութեամբ, բոլորին ալ լարուած ուշադրութիւնը պահեցին իրենց վրայ՝ արտասանութիւններով (նաեւ անգլերէն ու արաբերէն լեզուներով), տրամախօսութիւններով, մարզանքներով ու մանուսնոց հայկական պարերով, որոնք խանդավառ ծափահարութիւններ խլեցին ներկաներէն:

Հանդէսի աւարտին, Տեսուչ Հոգչ. Տ. Կիրեղ Ծ. Վարդապետ, բաժնելէ ետք 14 չըջանաւարտներու վկայականները, զովեւտով արտայայտուեցաւ մանկապարտիզպանուհի Օր. Մելինէ Եղիսեանի և իրեն զործակից երեք ուսուցչուհիներուն նկատմամբ, որոնք յսի՛ գովելի ջանասիրութեամբ 9 ամիսներու ընթացքին ըրած էին իրենց կարելին՝ մանուկներու մատղաշ հոգիներուն հոգածու գաստխարակութեանը համար: Ապա խօսքը ուղղելով ծնողներուն, ցաւով դիտել տուաւ պարտքան անոնց՝ որոնք իրենց դասակները կ'առաջնորդէն օտար վարժարան, ուր օտար բարբերու և սղոցեցութիւններու տակ կը խաթարուի նկարագրի մեր փոքրիկներուն:

Տէրունական ազօթքի երգեցողութենէն ետք, Հոգչ. Հայրսուրբը «Պահպանիչ»-ով փակեց հանդէսը:

Գ. ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԲԱԺՆԵՆ

15 Յունիս, Շարաթ երկօրեան ժամը 6ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր զլխաւորութեամբ և Հոգեւորհ. Հայրերու, ծնողներու և հրաւիրեալներու կողմէ բաղմութեան մը ներկայութեան, տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի Ամսկերջի Հանդէսը, Վարժարանի սրահին մէջ:

Երկու ժամեր տեսող և երկու մասերէ բաղկացած հանդէսը սկսաւ Թարգմանչաց յարսկանի և Հայրապետական Մաղթերդի երգեցողութեամբ: Ապա չըջանաւարտ սանահներէն Օր. Զիմի Գանդաշեան ըրաւ բացման խօսքը: Յայտագրին մնացեալ մասը կը բաղկանար առեմախօսութիւններէ և խմբերգներէ: Առաջինները կատարուեցան ընթացաւարտներ՝ Երուանդ Սահակեանի, Ռոդին Գամաճեանի և Սենա Անտոնեանի կողմէ: Բոլորին ալ նիւթն էր Սասունցի Դաւիթ աւանդալէպը՝ անոր առաջին անգամ գրական տարադով յոյս տեսնելուն հարիւրամեակին առիթով: Իսկ խմբերգները կատարեց Վարժարանի երկսեռ երգչախումբը, ղեկավարութեամբ Պր. Սահակ Գալաճեանի և դաշնակի ընկերակցութեամբ Պր. Վահէ Գալաճեանի:

Հանդէսի երկրորդ բաժինը սկսաւ Վարժարանի ժխմեալ զօրծուելութեան տեղեկագրի ընթերցումով (որ կ'երևի Սիմեի ներկայ թիւին մէջ): Տասնչորս չըջանաւարտներու վկայականներու և մրցանակներու բաշխումէն և ընթացաւարտներուն կողմէ երգուած հրամէշտի երգէն յետոյ, ընթացաւարտ Օր. Սեղա Արսէնեան ուղերձով մը յայտնեց իր և իր բնկեր-բնկերուհիներուն զգացումներն ու շնորհակալութիւնները: Պատրիարք Ս. Հայր իր փակման խօսքին մէջ զրուտեց Տեսուչ Հոգչ. Տ. Կիրեղ Ծ. Վարդապետը, զպրոցի յառաջգիւրմութեան ի խնդիր աւելի քան քսան տարիներու ընթացքին կատարած իր անսակարկ զոհողութիւններուն համար, և յայտնելէ ետք թէ սերունդներու դաստիարակութիւնը որքա՛ն դժուար զործ է ներկայիս, շնորհաւորեց չըջանաւարտներն ու իրենց ծնողները, «Պահպանիչ»-ով օրհնեց ամէնքը և փակեց հանդէսը: